



# ԹԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳՐԻ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՏԵՍԻԿԵՐԵ ԵՒ ԸՆԴԵՐԵ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻՒ 9.

1853

ՄԱՅԻՍԻ 1.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ոչ զրոխս աւետարանի տակ յեմ դներ :

**Խ**նաշխացի խօսք է այս, դարձեալ ինչ անխելք խօսք է այս. բայց ինչպէս կրնայ ըլլալ նոյն մէկ խօսքը խելացի միանգամայն և անխելք :

Շախարհիս մէջ մեծ շփոթութիւններուն պատճառն ինչ է. եթէ ինչուան այսօր չեիր զիտեր, ով սիրելի ընթերցող, ահա հիմա սովորէ. Շախարհիս խռովութիւններուն մէկ գլխաւոր պատճառն է նոյն մէկ խօսքին երկու երեսով ըլլալը՝ խելացի և անխելք, չար և բարի. Խասովորաբար մարդկան ընկերութեան մէջ խօսքերուն շատը ասոր նման են. նոյն մէկ խօսքն խելացի մարդմը կ'ըսէ, խօսքն ալ կ'ըլլայ խելացի. Երբ

անխելք մարդ մը նոյն խօսքը կ'ըսէ, խօսքն ալ անխելք կ'ըլլայ. բարին կ'ըսէ, խօսքը բարի կ'ըլլայ, չարը կ'ըսէ, խօսքը չար կ'ըլլայ: Խրկից կը ծագին անհնարին վէճեր, և սաստիկ շփոթութիւններ. որովհետեւ խօսքը մէկ է, ամենուն ալ բերանն է, ամէնն ալ նոյնը կ'ըսեն. բայց խօսքին իմաստը ամէն մարդի իր ու վաճին պէս կը հասկընայ: Խրկուհովի մէկ տեղ կ'ըսեն. Ողջ գլուխս աւետարանի տակ չեմ գներ. ու կ'երթայ մէկը հանգիստ ու անհօգ կեանք մը անցընելու հետ կ'ըլլայ, իսկ մէկալը միայն իրեն պատշաճ չեղած բանին մէջ շխառնուիր: Խրկուքն ալ նոյն խօսքէն կը իւլ-

րատուին . մէկը ծուլութի անպիտանու .  
թիւն կը սովորի , մէկան զգոյշ աչալընու .  
թիւն : Կոյնափէս ծաղկէն պիծակը թոյն  
կը ժողվէ , աղէկ մեղուն մեղը ու մոմ .  
նոյն կրակին մէջ ոսկին կը դտուի , յար-  
դը կ'այրի կը ջնջուի : Եւ ինչ անհնարին  
բան է այս երկու կարծիքները միաբա-  
նել , որոնց արմատը նոյն մէկ խօսքն է ,  
իսկ անկից հետևած գործքերը իրարու-  
թուրովինն ներհակ : Հարգոյ ընթերցող ,  
դու ալքու վրադ մոտածէ . արդեօքքանի  
անդամ եղեր է՝ որ խօսքը ուզածիդ պէս  
հասկնալովքու կրիցդ յարմարցնելով  
խօսք չասկրցող երեցեր ես , և դու խօսք  
չասկնալովդ՝ գուրիշը խօսք չասկրցող  
կարծեր ես : Ուրեմն հիմա եկքեզի հետ  
քիչ մը աշխատինք՝ այս երկու կարծիք-  
ները միաբանելու . նայինք ուրեմն թէ  
ինչ հնարք կրնանք բռնել որ դադրին  
մարդիկ մի և նոյն խօսքը երկու այլ և այլ  
մոքով հասկնալէն : ( Երինակէն դիւ-  
րաւ կրնանք սորվիլ այս բանիս հնարքը :  
Վեղուն և պիծակն նոյն մէկ ծաղկէն ,  
ըսինք , մեղը և թոյն կը ժողվէն . ասոնք  
որպէս զի երկուքն ալ մեղը ժողվէն , ու-  
րիշ հնարք չկայ՝ բայց եթէ զպիծակը  
մեղու շինել , որպէս զի ան ալ սկսի մեղը  
ժողվել . այսպէս յարդն ալ կրակին մէջ  
չայրելու համար , զյարդն ոսկի շինելու  
է : Այս ինչ դիւրին բան . ըսել է թէ  
այդ բանդ անկարելի է . երկար խօսա-  
կցութեան կարօտ չէ . ուստի դիւրին է՝  
ոչ եթէ փոխելը , այլ անկարելի ըլլալը  
ճանչնալը , որ ամեննեին յուսոյ մը տեղ  
չթողուր : Ուրեմն ահա քեզի դիւրին  
ճամբայ մարդկան կարծիքը միաբանե-  
ցընելու . երբ ընկերութէ մը մէջ մէկն  
որ շիտակ խօսքը ծուռ կը հասկընայ և  
առանց տարակուսելու կը պնդէ , եթէ  
կ'ուզես խաղաղիլ և զընկերութիւնը  
խաղացընել , պարապ տեղը մ'աշխա-  
տիր փոխելու այն մարդոյն կարծիքը .  
անոր համառօտ ճամբան այս է , պէտք  
է ընկերութենէն դուրս հանել զայն  
մարդը , թող երթայ իր կարծիքը ինքը  
գործածէ : Ուշափ մարդիկ զայս կանո-  
նը չպիտնալով , ինչ անօգուտ վէճեր կ'ը-  
նեն այսպիսի մարդկանց հետ , յուսա-

լով որ այս այն պատճառներով զանոնք  
համոզեն :

Այս բանս կրնայ պատահիլ առան-  
ձին գերդաստաններու մէջ , ընկերու-  
թեանց մէջ , նաև ամբողջազգի մը մէջ :  
Եւ այս կանոնը չփիտնալուն երկրորդ  
խասն ալ է՝ որ այնպիսի ծուռ կարծիքը  
պնդողը՝ գերդաստանէն կամ ընկերու-  
թենէն չէուացնելով , պատճառ կ'ըլլայ  
որ ուրիշ տղէտներ ալ խաբուելով՝ այն  
պիտոյն կողմը կը սկսին բռնել . և որով-  
հետեւ ըսինք թէ յամառեալ կարծիքը  
անկարելի է փոխել , անկէ ետև այն  
գերդաստանին կամ ընկերութեան մէջ  
խուվութիւնը անհաշտելի կ'ըլլայ . և  
այն խուվութենէն առաջ եկած չարիքը  
անդարմաննելի : — Այսպէս խօսքը սխալ  
հասկընալուն , և այսպէս ընկերութեն  
մէջ նոյն բանին վրայ այլ և այլ անձանց  
իրարու դէմկարծիք ունենալու խասին  
օրինակը՝ կը տեսնուի մեր ազգին վրայ  
ալ . որովհետեւ չէ թէ պատճառ հաս-  
կընալով ճշմարտութիւնն իմանալու , և  
անոր վրայ միաբանելու ջանք կը ցուցը-  
նեն , այլ իւրաքանչիւր իր բռնած կարծի-  
քը պնդելու հետ կ'ըլլան , և ազգին  
խաժամուժն ալ կողմը բռնելով , առանց  
բան մը գիտնալու կը ջանան որ իրենց  
կողմը անկարօտ և յաղթող երեայ :  
Այս բանիս սկիզբը նոյն մէկ խօսքին  
երկու մոքով հասկըցուելու ըլլան է ,  
իսկ վախճանը՝ խաս անդարմաննելի :  
Ա ասն զի տարաձայն կարծիքները կիրք  
բանեցընելով ճշմարտութեան միաբա-  
նեցընել ուզողը՝ կը նմանի այն մարդուն  
որ կրակէ ժապաւէնով ծրաբել կ'ու-  
զէ մէկ կերպաս մը . կամ թէ ըսեմ  
կրակէ ձեռուըներով կերպասի մը ինչ  
տեսակ ըլլալը քննելու համար կը շօշա-  
փէ . որ ուրիշ բան չգտներ զկերպասը  
բայց եթէ միացած կրակ : Որովհետեւ  
երբոր մարդս կիրք կ'ելլէ , մարդին մէջ  
կրակ կը վառուի . ամէն տուած պատ-  
ճառներդ անոր մտաց մէջ բոց մը կը  
հանեն , ու մնխիր կը դառնան , ուրիշ  
օգուտ մը ըեն ըներ : Եւ եթէ ոսկւոյ պէս  
անխար ճշմարտութիւն մը ձգես կիրք  
ելած մոքին մէջ , անոր կրից կրակը՝ քու

ձգած ճշմարտութեան ոսկիդ ալ կրակ կը տեսնէ , ու ուրիշ շահ մը ջիմանար այն ճշմարտութենէն , բայց եթէ կրից կրակի առաւելութիւն , և սրտին վրայ ծանրութիւն և նեղութիւն , որ չկրնար զայն ալ մոխիր դարձնելու ջնջել մտաց մէջէն : ||` տքին տաճնապը կը շատնայ , բայց քանի որ այս կրակը մտացը մէջ վառուած է , այն ճշմարտութեան ոսկին իր մտացը կրից կրակէն չկրնար զանազաննել : ||` յսպէս անդարման է կարծեաց տարբերութիւնը երբոր կրքով կը պաշարուի :

Հիմա մէկն ըսէ՝ թէ ուրեմն ինչ օգուտ այս խոսակցութենէն որ կ'ըսես , երբ դու ալ կ'ըսես՝ թէ այսպիսի հակառակ մտքով խոսք հասկըցողներուն կարծիքը փոխել ըլլար : — ||` յս մեծ օգուտը կրնայ ըլլալ որ՝ որովհետեւ խօսքի մը մէջէն հակառակ կարծիք հանողները շատ հոգի մէկ տեղ չեն ըլլար , այլ շատերը վերջէն կը սկսին հետեւիլ իրենք առաջուց շիտակն հասկըցած ըլլալնուն համար , ուստի երբոր ամէն մարդ հասկընայ այսպիսի հակառակ կարծիքներէն առաջն առաջն եկած վնասները , կը զգուշանայ հետեւու որ և իցէ կարծիքի մը առանց առաջուց աղէկ մը իմանալու անոնց ներհակ կարծեաց ինչպիսի բան ըլլալը . և այսպէս ճշմարտութեան հակառակ կարծիքը երբ հետեւող չգտներ , ընկերուէ մէջ խոռովութիւն ալ ըլլար :

Հոս մէկը կրնայ տարակուսիլ թէ ինչպէս կ'ըլլայ որ մէկ ծուռ հակառակ կարծիք մը այնչափ հետեւողներ կը գըտնէ . այնպէս որ կարծեաց ծուռ ըլլալն հասկըցուելէն ետքն ալ նոյն կարծիքը հաստատողին հետ մէկ տեղ անոր հետեւողներն ալ չուզեն մտքերնին փոխել : ||` յսոր պատասխանն ալ յայտնի է . որովհետեւ բնականաբար այն կարծիքն ըսողը ունի իրեն ազգականներ , բարեկամներ , որոնք առաջուց չգիտնալով բանին շիտակը , անոր կարծեացը դիւրաւ կը հաւտան և անոր կը հետեւին : ||` յս մէյմը բռնելէն ետեւ այն կարծիքը , երկու մեծ դժուարութիններ առջեննին կը տեսնեն իրենց կարծիքը փոխելու : ||` յս մը որ

հարկ կ'ըլլայ խոստովանիլ իրենց տգէտ ըլլալնին , իբրև թէ չգիտնալով այն ծուռ կարծեաց հետեւեր են , որ է ճշմարիտ . բայց մարդուս բնութեան խիստ ծանր կու գայ ինքզինքը տգէտ երեցընել . երկրորդ՝ որ այն կարծիքնին փոխելով իրենց բարեկամին նախատինք ըրած կ'ըլլան : ||` յս երկու արգելքները կարծիք փոխելու այնպէս մեծ են , որ բնականաբար գրեթէ անկարելի է որ մէկը կարենայ յաղթել :

||` յս բանիս խիստ աղուոր օրինակ մըն են ||` ովսեսի ղրկած տասը լրտեսները , որոնք ||` յսուուծոյ խոստացած երկիրները զննելու երթալով , երբ դարձան , այն տեղին սքանչելի բերքերէն ալ օրինակ հետերնին բերելով , ասոնց մէ երկուքը ուրախութեամբ կը պատմէին տեսածնին , որ այնպիսի աղէկ երկիր ||` յսուուած իրենց պիտի տայ . իսկ մէկալ տասն անձինքը մոռնալով ||` յսուուծոյ զօրութիւնը , սկսան վախցրնել ժողովուրդը թէ բնակիչքը զօրաւոր և անյաղթելի են . այս խօսքերէն ժողովը դեան միտքը ծուռ կարծիքով պաշարուեցաւ , սրտերնին վախը տիրեց , և սկըսան չուզել որ երթան , ըսելով թէ մեր տղոցմով անոնց սրայն զոհ պիտի ըլլանք : ||` ովսէս , ||` յարոն և ամէն իմաստունները սկսան հասկըցընել անոնց ||` յսուուծոյ զօրութիւնը , որ քիչ օր առաջ իրենց ցուցըցեր էր . բայց անկարելի եղաւ փոխելու անոնց ծուռ մտածուիր , նախապաշարուած տասը լրտեսներուն խօսքերէն : ||` նոյւան որ ||` յսուուած պատմեց զիրենք ու հրամայեց՝ որ որովհետեւ չեն ուզեր երթալ՝ չերթան , այլ անապատին մէջ ասզին անդին պտըտին ինչուան իրենց մայր : ||` յատիթը ընդունելին ետքը զզջացան ուզեցին երթալ , բայց ան ատենն ալ ||` յսուուած չթողուց որ երթան :

||` յսպէս անհնարին ըլլալուն համար ծուռ միտքը փոխել տալը , պէտք է ըստ կարիամեննուն հասկըցնել որ ամէն լածնուն , առանց քննելու մէկէն չաւտան . որ ըլլայ թէ կարծիքնին փոխելու ստիպուին , և չկարենալով փոխել՝ խոռովին :